

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2014թ. նոյեմբերի 5-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա.Սաֆյանը մասնակցել է ք. Բրյուսելում (Բելգիա) կայացած ՀՀ-ԵՄ առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով ենթակոմիտեի հերթական 13-րդ նիստին,
- ✓ 2014թ. նոյեմբերի 3-7-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Բնապահպանական վիճակագրական տեղեկատվության որակի հարցերին նվիրված սեմինարին, Վիճակագիրների և բնապահպանների միասնական աշխատանքի նպատակային խմբի 9-րդ նստաշրջանին և Բնապահպանական մոնիթորինգի և գնահատման աշխատանքային խմբի 15-րդ նստաշրջանին,
- ✓ 2014թ. նոյեմբերի 10-12-ը ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Գևորգյանը և Լ. Պետրոսյանը մասնակցել են ք. Լյուքսեմբուրգում (Լյուքսեմբուրգ) կայացած TRANSMONEE ծրագրի շրջանակում անդամ-երկրների համակարգողների հանդիպմանը ,
- ✓ 2014թ. նոյեմբերի 19-21-ը ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Շաբոյանը և տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Շախգելյանը մասնակցել են ք. Լյուքսեմբուրգում (Լյուքսեմբուրգ) կայացած «SDMX-ը տվյալների և մեթատվյալների փոխանակման համար» խորագրով ուսումնական դասընթացին,
- ✓ 2014թ. նոյեմբերի 18-20-ը ՀՀ ԱՎԾ գների և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը մասնակցել է ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած Միջազգային համադրումների ծրագրով ներդրումային ապրանք-ներկայացուցիչների տեխնիկական բնութագրերի և դրանց գնային տեղեկատվության ստուգման և համաձայնեցման նպատակով կազմակերպված աշխատանքային խորհրդակցությանը,
- ✓ 2014թ. նոյեմբերի 20-21-ը ՀՀ ԱՎԾ արդյունաբերության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Հ. Հովհաննիսյանը մասնակցել է ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած Արդյունաբերության վիճակագրության հարցաթերթերի վերաբերյալ սեմինարին,
- ✓ 2014թ. նոյեմբերի 24-26-ը ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Վ. Օբոյանցը մասնակցել է ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած Աշխարհագրական տեղեկատվական համակարգերին (GIS) նվիրված տարածաշրջանային սեմինարին,

- ✓ 2014թ. նոյեմբերի 24-28-ը ՀՀ ՎՊԽ անդամ Լ. Պետրոսյանը և ՀՀ ԱՎԾ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը մասնակցել են ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած «Եռամսյակային ազգային հաշիվների ձեռնարկ» խորագրով դասընթացին,
- ✓ 2014թ. նոյեմբերի 25-27-ը ՀՀ ԱՎԾ արդյունաբերության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հակոբյանը և նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարգսյանը մասնակցել են ք. Ջագրեբում (Խորվաթիա) կայացած «Ինոգեյթ ծրագրի էներգետիկ վիճակագրության ցանց» թեմայով հանդիպմանը և «Էներգետիկ վիճակագրության գործողությունների ծրագրի ձեռքբերումները և էներգետիկ վիճակագրության տվյալների որակի, հաշվեկշիռների և պլանավորման կատարելագործման անհրաժեշտությունը» խորագրով միջազգային կոնֆերանսին,
- ✓ 2014թ. դեկտեմբերի 3-4-ը ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Թրիլիսիում (Վրաստան) կայացած «Արևելյան գործընկերության պլատֆորմ 4՝ 2014թ. Թուրինի տարածաշրջանային գործընթաց» խորագրով կոնֆերանսին,
- ✓ 2014թ. դեկտեմբերի 8-12-ը ՀՀ ԱՎԾ առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Հ. Բաբայանը մասնակցել են ք. Ալմաթիում (Ղազախստան) կայացած «Տեղեկատվական տնտեսության վիճակագրություն» խորագրով ուսումնական դասընթացին,
- ✓ 2014թ. դեկտեմբերի 10-11-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Ալմաթիում (Ղազախստան) կայացած ՄԱԿ-ի զարգացման հաշվի 9-րդ տրանշի մեկնարկային հանդիպմանը,
- ✓ 2014թ. դեկտեմբերի 11-12-ը ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը և ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել են ք. Մինսկում (Բելառուս) կայացած «ԱՊՀ տարածաշրջանում աշխատանքի վիճակագրության զարգացումը. տեղեկատվության փոխանակման խնդիրները և հեռանկարները» խորագրով խորհրդակցությանը, Լ. Միրզոյանը մասնակցել է նաև ԱՊՀ վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 52-րդ նիստին: